մոլված լինելով, որ դա մզկիթ եղած չէ, այլ եթէ ոչ կաթողիկոսարան՝ գոնէ կամ ուսումնարան, ժողովարան և, թերևս, եկեղեցի եղած լինէր։

Մեծապատիւ խմբագիր, բարեհաճեցէք ներկայ երկտող գրութիւնս զետեղել ձեր պատւական «Մշակի» մէջ։

Կարապետ Յովհանջանեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍԻ Բելգիական հիւպատոսի պաշտօնակատար պ. Զարեհ խնդրում է մեզ յայտնել հետևեալը։ «Բելգիական անկախութեան յիսունամեայ տարեդարձի տօնի պատճառով Բրիւսէլի սինդիկալեան ժողովը կազմում է բելգիական թագաւորի բարձր հովանաւորութեամբ, առևտրի և արդիւնագործութեան միջազգային կօնգրէս, որ լինելու է Բրիւսէլի մէջ ներկայ թւի սեպտեմբերի 6-ին (նոր տոմարով)։ Խնդրում եմ այդ մասին յայտնել ձեր լրագրում ի գիտութիւն կովկասեան վաճառականների և արդիւնագործների, և աւելացնում եմ որ ցանկացողները ընկերութեան աշխատանքների հետ ծանօթանալու, հրաւիրվում են շնորհ բերել քաղաքիս Բելգիական հիւպատոսութեան գրասենեակը ամեն օր, բացի կիրակի օրերից առաւօտեան $9^{1}/_{2}$ ժամից մինչև $12^{1}/_{2}$ ժամ։»

—

ՇՈՒՇՈՒՑ, մի անծանօթ պարոնից, ստացանք 1 րուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

Մենք յայտնեցինք որ ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող մի ագուլեցի հայ պարոն շատ արագ և աջող կերպով բժշկում է սոլիտէր ասված հիւանդութիւնից, այժմ յայտնում ենք պարոնի ազգանունը։ Դա պ. Մարտիրոս Ալիխազարեանն է, որ ունի Սօլօլակսկայա փողոցի վրա մի քաղցրեղէնների խանութ, Սումբատովի տանը, «Վարշավսկայա պեկարնիա» անունով։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՐ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

—

Մայրաքաղաքիս Անգլօ-Գաղղիական Սէմաֆօռ լրագիրն «Հայաստան» խորագրով նամակ մը կը հրատարակէ, յորում իւր Կարնոյ թղթակիցը տեղւոյն նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Մաղաքիա Օրմանեան Ծ. վարդապետի ժամանումն զգայուն կերպիւ կը նկարագրէ։ Մեր Կարնոյ թղթակիցն արդէն նկարագրած էր այս իրողութիւնն, որ, ինչպէս Սէմաֆօռի թղթակցին տուած տեղեկութիւններէն ալ կը հասկցուի, Հայաստանի մայրաքաղաքին համար եզական դէպք մ'եղած է թէ՛ կառավարութեանն և թէ շուքին կողմանէ։

Սէմաֆօռի թղթակիցը նոյն օրը Կարնոյ Գաղղիական նոր դեսպան Պ. Լաքոսթի ալ իւր պաշտօնատեղին հասնելը նկարագրելով, քանի մը տեղեկութիւններ կուտայ, զորս արժան կը համարիմք թարգմանել։

«Պ. Լաքոսթ և Գեր. Օրմանեան մի և նոյն օր ճանբայ ելած էին Տրապիզոնէն և 'ի միասին կուգային ի Կարին։ Բայց երբ քաղաքիս մօտեցան, ինչ ինչ պաշտօնական արարողութեանց կատարման համար, հարկ եղաւ որ իրարմէ զատ մտնէին Կարին։ Ուստի Գեր. Օրմանեանի կողմանէ ընծայեալ գեղեցիկ կառքով մը Պ. Լաքոսթ անկէ մի ժամ առաջ ճանբայ ելաւ Ըլըճա գիւղէն, ուր եկած էին առջի իրիկուն։

Ըլըճայի և Կարնոյ միջև հայք կէզ ըսուած տեղը խուռն բազմութեամբ հաւաքուած էին իրենց նոր առաջնորդին փառաւոր ընդունելութիւն մ'ընելու համար։ Երբ Պ. Լաքոսթ Գեր. Օրմանեանէն առաջ հոն հասաւ, հայք զինքն հրաւիրեցին հանգչիլ այն վրանին ներքև, զոր առաջնորդին համար պատրաստած էին, և հայոց խուռն բազմութիւն մը «Մարսէյեզի» երգն երգելով ողջունեց Գաղղիական նոր հիւպատոսն։ Այս այրական և հայրենասիրական երգն, որ Կարնոյ դաշտին մէջ կը հնչէր, անշուշտ հիւպատոսին յիշեցուց իւր բացակայ հայրենեաց յիշատակներն, այն հանրապետական Գաղղիոյ յիշատակներն, որ տակաւին այսօր իսկ կը կռուի յառաջդիմութեան համար։ Պ. Լաքոսթ յուզուած էր։

«Նոր հիւպատոսն համակրական, ուշիմ և եռանդոտ մարդ մ՚է։ Կը կարծուի թէ պիտի յաջողի Ասիոյ այս մասին մէջ Գաղղիոյ ազդեցութիւնը վերստին բարձրացնել։ Այս բանն ուրիշ կերպիւ չը կրնար ընել՝ բայց եթէ հանրապետական կառավարութեան ազատական ճանբուն հետևելով, ազգութեանց սկզբան ոյժ տալով և համարձակապէս մերժելով այն չափազանց սահմանափակ և յետադէմ գաղափարները, զորս Գաղղիոյ Ասիական հիւպատոսք դժբաղդաբար պաշտպանած են մինչև ցարդ։ Հայք ալ արդէն Գաղղիոյ նկատմամբ իրենց համակրութիւնները վերստին արծարծել միայն կը խնդրեն։»

Սէմաֆօռի թղթակիցը գովութեամբ կը խօսի Կարնոյ նոր առաջնորդին համար, «որ կըսէ, արդէն հանրածանօթ է Կ. Պօլսոյ մէջ և աւելի իսկ յիտալիա և ի Հռոմ մանաւորապէս, ուր իւր բազմաթիւ հրատարակութիւնք և հաւատոյ տարածման ժողովին (Բրօբականտա) դէմ վարած ջալինները ժողովրդական ըրած են զինք։»

Նոյն թղթակիցն իւր նամակին մէջ հետևեալ հատուածն ալ կը գրէ։

«Թէրճէմանը Հագիգաթի քանի մ'այլանդակ յօդուածները Կարնոյ նահանգին բնակչաց ծիծաղը շարժելու արժանիքն ունեցան։ Հագիգաթի ունչաբանութիւններն և զԱրմենիան և ըղԳրդաստան իրարու խառնելն՝ ունանց մտածել տուին այս տեղէն պատմութեան և աշխարհագրութեան դասատու մը ղրկել կատաղի լրագրապետին։ Սակայն յետոյ ետ կեցան, նկատելով որ Թէրճէմանը Հագիգաթին դաս առնլու ժամանակն անցած էր։ Այդ լրագիրն, և անոնք որ գործիքն է նա, խոստում և հայրենասիրական գործ մ'ըրած կը լինէին եթէ Արմէնիոյ մէջ մտցուելիք բարենորոգմանց դատը պաշտպանէին, որք անհամբերութեամբ կը սպասուին, և իրաց վիճակին աւելի ծանր հանգամանք մը տալէ զգուշանային։»

(Մասիս)

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ Պօլիս, 3 յուլիս

Թիւրքաց կառավարութիւնը Հայաստանը պաշարման վիճակի մէջ կամ յայտարարած է, կամ յայտարարելու վրա է։ Այս լուրը երեք օր առաջ քիչ շատ տարածուած էր, երբ երէկ Հաքիքաթ, որ Սուլթանին անձնական թերթը կը սեպուի, կերպով մը նորա ստուգութիւնն հաստատեց. Հաքիքաթ կը հրատարակէ թէ բարենորոգմանց լուրը Քիւրդիստանի մէջ մեծ վրդովում պատճառած է. Ու թէ խաղաղութիւնը չը խանգարելու համար Բ. Դուռը կառավարիչներուն առ այս ի գործ դրուելիք միջոցներու մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդած է. Պօլսեցիքս որ տաճկաց խօսելու և գործելու եղանակներէն ինչ հետևութիւն հանելու սակաւ ինչ վարժ եմք, այս տողերէն յայտնի կը տեսնենք, որ Բ. Դուռը քիչ շատ երկիւղ ունենալով Հայաստանէն, զսպելու անուղղակի միջոցները բաւական չը համարեր և ուղղակի միջոցներու ևս կը դիմէ։ Եթէ եւրոպական տէրութեանց կողմէ հարցում լինի, կը պատասխանեն թէ հայերն պաշտպանելու համար է, որ այս միջոցներն ձեռք առինք, մինչդեռ ընդհակառակն է։ Կը նկատեմք նաև որ Հայաստանի կարևոր վայրերէն Կ. Պօլիս գտնուող Թիւրք զինուորներն հեռագրաւ իրենց երկիրներն կը դարձնեն սուկ անհատ, և նոցա տեղ ուրիշ գաւառներէ զինուոր կը բերեն։ Այդ զինուորներուն գլուխներն լեցուցած են և կերթան իրենց տեղերը կը զետեղուին ո և է պատահականութեան պատրաստ գտնուելու համար։ Եւրոպական տէրութեանց ծանուցագրի տուած պատասխանին մէջ, ինչ հարկ կար հայոց թիւ դնել, զի հարցնող չը կար. բայց կասկածներու մէջ լինելով այժմէն կուզեն մեր թիւը խիստ սակաւ ցոյց տալ։ Եւրոպա ինչ կը մտածէ այս դարձուածքներուն վրա. անգլիացիք Հայաստանի մէջ գաղթականութիւն մը հաստատելու գաղափարէն ետ չեն կեցած, պաշտօնական և ոչ—պաշտօնական անձինք Վանայ, Մուշի մէջ կը շրջագայեն, գիւղերն կայցելեն, մանրամասն տեղեկութիւններ կը ստանան և հաւատարիմ աղբիւրներ մ'իր կը հաղորդեն թէ մեծաքանակ հողեր գնելու պատրաստութիւններ կը տեսնեն, և թէ շատ օգտակար չեն համարեր իրենք անգլիացոց Հայաստանի սրտին մէջ ոտք կոխելն։ Անշուշտ ռուս կառավարութիւնն ալ անխորժանօք չը պիտի տեսնէ այսպիսի դրացիներ, և նորա քաղաքագիտութիւնէն կախում ունի այդ գաղթականութեան գաղափարն անգործադրելի ընել։ Քաղաքական տագնապալից վայրկեաններուն Հայաստանի սովը կը սաստկանայ, վայրկեան մը կը յուսացուի որ ցորենի գիներն կը ցածնան, բայց շուտով այդ յոյսը կը կորսնցնեն, յառաջիկայ հնձոց կը սպասեն, բայց մինչև այն ատեն ապրելու է. իսկ քրդաց ասպատակութիւն մը այդ արտերը ապականելու երկիւղը կը տիրապետէ։ Կ. Պօլսոյ կեդրոնական յանձնաժողովը 20000 ոսկի օսմանեան ազգէն փոխառութիւն մը ընելու պէտքն կը զգայ։ Թէպէտ և մեծ վիճակահանութեան մը հրամանը տրուեցաւ, բայց նախ աղէկ հայոց համար շատ բան մը սպասելու չենք, երկրորդ, եթէ յաջողի իսկ, բաւական ժամանակի կարօտ է։ Այդ վիճակահանութեան ժողովը մեր կեդրոնականէն տարբեր է։ Հիւանդութիւններն ճարակել սկսած են։ Հայաստանի այս վիճակը մեզ մտածել կուտայ թէ արդեօք կենսական հարց մը չէ մեզ համար կեդրոնական զօրաւոր ընկերութիւն մը ունենանք, ամեն ժամանակ պատրաստ հայոց նիւթական օգնութիւններ մատուցանելու, մանաւանդ Հայաստանի մէջ, որ այժմ թրքաց քաղաքականութիւնը գործուն կերպով կաշխատի. պ. Նաւասարդեանի այս նիւթին վրա «Մշակի» մէջ հրատարակած երկու յօդուածները բաւական ուշադրութիւն գրաւեցին և կարծեմք թէ գործելու կարող անձինք ոմանք խորհուրդ յղացած են հետամուտ լինելու թէ արդեօք կրնան պ. Նաւասարդեանի ունեցած գաղափարը իրականացնել և եթէ յաջողութեան բաւական յոյս գտնեն, այն ատեն յարաբերութեան պիտի մտնեն ձեզ հետ նաև։ Եթէ այս ձեռնարկը, որոյ յաջողութեան կը փափագիմք, կարևորութիւն ստանայ, պէտք եղած տեղեկութիւնները ձեզ կը հաղորդեմք։

Առ այժմ Արևելեան-Ռումէլիի մէջ ալ յանձնաժողով մը կը կազմուի, հայ և Պուլկարներէ, կեդրոնական ժողովոյ ձեռամբ Հայաստանի սովելոց օգնելու համար։

Այսքան ցաւերն արդեօք բաւական չեն մեր խելքը գլուխնիս բերելու համար, և կրօնական կերպով բաժանեալ հայոցս համզում գոյացնել, թէ զիրար հարուածելէ ետ կենանք։ Կարնոյ մէջ մեր և հռովմէական հայոց մէջ գժտութիւն մը ծագելու երկիւղն ունեմք։ Օրմանեան Կարնոյ առաջնորդ ընտրուելով, հոն կերթայ. տեղական իշխանութիւնը կուզէ որ հռովմէական հայոց առաջնորդը նախապատուութիւն ունենայ մերին վրայ, և կուզէ զայս ընել որպէս զի երկու մասերու մէջ ատելութիւն սկսի. հռովմէական հայոց առաջնորդը դժբաղդաբար այս դարանին մէջ կիյնա. իւր աթոռը տեղական ժողովին մէջ Օրմանեանէն վեր կը դնեն, ստորագրութեանց հանրագիրը նախ Օրմանեանի ստորագրել չեն տար։ Օրմանեանն չընդունեներ զայս և կը բողոքէ. կառարկեն թէ Օրմանեան վարդապետ է և նոր, մինչ հռովմէական հայոցը եպիսկոպոս է և հին. բայց պէտք է գիտնալ որ Թիւրքիոյ մէջ զայս չեն նայիր, այլ նախ յոյներն են, յետոյ հայերն, յետոյ կարգաւ կրօնապէս բաժանեալ ուրիշ հայերն. եթէ այսպէս չըլլար, Կ. Պօլիս պէտք էր որ Հասունը իբր կաթողիկոս և հնագոյն մեր պատրիարքէն առաջ անցնէր, մեր պատրիարքը իբր հնագոյն յունաց պատրիարքէն առաջ անցնէր։ Պ. Պօռէ Կ. Պօլսոյ Գաղղիոյ դեսպան եղած օրով այսպիսի խաղ մը խաղալ ուզեցին, բայց չը յաջողեցան. հիմա Կարնոյ մէջ փորձել կուզեն, բայց ինչ որ ալ ըլլան Օրմանեան չը կրնար այլ կերպ շարժիլ. Կ. Պօլսոյ կեդրոնական վարչութիւնը ուրիշ կերպ չը կրնար ընդունել։ Չեմք գիտեր թէ Գաղղիոյ Կարնոյ հիւպատոսը այսպիսիներու պահանջման մը կողմնակից պիտի գտնուի և հայոց հետ գժտութիւն պիտի ունենայ, ինչ որ ալ ըլլայ ախորժելի բաներ չեն։

Ռուսիոյ կայսրուհւոյ հոգւոյն համար յիշեալ օրը ս. պատրիարքը հանդիսաւոր պատարագ մատոյց Պեօյիւք-Դէրէի հայոց եկեղեցւոյն մէջ. ներկայ էին դեսպանուհին և բարձրաստիճան պաշտօնեայք, դեսպանը քաղաքական կարևոր խնդրոյ պատճառաւ ստիպեալ էր Բ. Դուռը երթալ։

Անգղիոյ դեսպանատան ա. թարգման պ. Սանդիսընի նկատմամբ բաւական լուրեր տարածվեցան. անցեալ օրը կօշէնի հետ սուլթանին կը ներկայանան, կօշէնը ազդու լեզու մը կը գործածէ, թարգմանը քիչ շատ մեղմելով կը թարգմանէ սուլթանին. վերջը Գաղղիոյ դեսպանը կը ներկայանայ և ինքն ալ նոյնպէս ազդու կերպով կը խօսի և իւր թարգմանը ճիշտ կը թարգմանէ. սուլթանը կը հասկցնէ նմա թէ՛ պ. կօշէն այդպէս չը խօսեցաւ, մինչդեռ Թիսօ կըսէր թէ միասին համաձայնած են։ Թիսօ կօշէնի կը դիմէ, Սանդիսըն կը յայտնէ թէ հարկ էր սուլթանին այդպէս խօսել, զի իրենք նոր են և Թիւրքիոյ սովորութիւններն չեն գիտեր. Կօշէնի և իւր թարգմանին մէջ բաւական գժտութիւն տիրած է. խնդիրն այնչափ կարևորութիւն ունենալու չէ. Թարգմանին պ. Սանդիսօնի մայրը հայ է։

Արգօնի պալատան մէջ բաւական տարօրինակ դարձուածքներ տեղի կունենան, վեց եօթը կարևոր անձինք յանկարծական մահուան կը հանդիպին, որոց մէջ է պալատի աստղագուշակներուն գլուխը։

Ազգ. ժողովները այս շաբաթու ալ նիստ չը պիտի ընէ։ Այսչափ ուշանալուն զանազան պատճառներ կուտան, որն է ստոյգը չեմք գիտեր։

Հայկակ

## ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիէննա, 1 յուլիսի

Հաղորդում եմ ձեզ մի քանի լուրեր Վիէննայից։ Վիէննայի հայ հասարակութիւնը լսելով Հայաստանի սովատանջների ցաւալի դրութեան մասին, Ռումինիացի հայ պ. Ցարութիւն Պօպովիչի և Մխիթարեան ուխտի միաբան հայր Ղևոնդ Ցովհաննիսեանցի յորդորանքով, և տեղային կառավարութեան թոյլտուութեամբ կազմեց մի մասնաժողով յօգուտ սովեալների հանգանակութիւն հաւաքելու դիտաւորութեամբ։ Մասնաժողովին աջողվեցաւ հաւաքել թէ տեղային հայերից և թէ օտարազգիներից 3000 գուլդէն։ Բացի դրանից մասնաժողովի գլխաւոր պարագլուխները պ. Պօպովիչ և հայր Ղևոնդը խնդիրքով դիմեցին Աւստրիայի կայսրին։ Նորին մեծութիւնը շատ սիրով ընդունում է խնդիրքը և ասում է թէ երեք օրից յետոյ կը պատասխանի։ Եւ ճշմարիտ, երեք օրից յետոյ, ես ներկայ էի երբ մի պալատական մտաւ պ. Պօպովիչի գրասենեակը, ասելով որ Նորին մեծութիւնը ի նկատի առեց Հայաստանի սովեալների դրութիւնը և բարեհաճեց նուիրել յիշեալ նպատակին 1000 գուլդէն։ Այս խօսքերից յետոյ պալատականը հրաւիրեց պ. Պօպովիչին անցնել կայսերական գանձարանը, նուիրած գումարը ստանալու համար։ Այսպիսով Վիէննայի փոքրիկ հայ հասարակութիւնը կարողացաւ հաւաքել 4000 գուլդէն յօգուտ Հայաստանի սովատանջների։

Մխիթարեան միաբանութիւնից մի երիտասարդ աբեղայ կազմել է գերմաներէնից հայերէն և հայերէնից գերմաներէն մի հարուստ բառարան։ Կարծեմ առաջին անգամն է որ այդ տեսակ աշխատութիւն լոյս է տեսնում։ Բառարանը տպագրվելու է բաժանորդագրութեամբ և իւրաքանչիւր օրինակի գինն է $4^{1}/_{2}$ գուլդէն։ Բաժանորդագրութիւնը ընդունում են հայր Ղևոնդ Ցովհաննիսեան և պ. Պօպովիչ։

Վիէննայի մէջ թէև հայ—լուսաւորչականները բազմաթիւ չեն, բայց վաղուց զգում էին մի եկեղեցի հիմնելու անհրաժեշտութիւնը, առաւել այն պատճառով, որ այդտեղ գտնված հայ—կաթօլիկ միաբանութիւնը չէր ընդունում հայ—լուսաւորչականների կրօնական պէտքերը կատարելու, երբ պատահում էր նրանց մօտ որ և իցէ մկրտութիւն, թաղում, պսակ և այլն։ Այժմ մի և նոյն եռանդոտ երիտասարդ պ. Պօպովիչ ստորագրութիւն է բացել և եկեղեցու հիմնարկութեան համար հաւաքել է բաւական գումար։ Ցոյս կայ որ շուտով կը ձեռնարկվի եկեղեցու շէնքի կառուցմանը։

Աւստրիայի մայրաքաղաքը այս անգամ իմ վրա բոլորովին ուրիշ տպաւորութիւն գործեց։ Նա բաւականին գեղեցկացել է, գործարաններ և մեքենաներ աւելի կատարելագործվել են, բարձրագոյն դպրոցների թիւը բազմացել է, միով բանիւ ամեն ինչ փոխված է երևում։ Ես ակամայ յիշեցի Րաֆֆիի «Խենթ» երազը և այն գեղեցիկ քաղաքը, որ երկու հարիւր տարուց յետոյ պիտի բաղդ ունենայ տեսնել դժբաղդ Հայաստանը։ Նրանց այդպիսի երազները մի փոքր շուտով կատարվէին։

Հ. Աբովեանց

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ